



## 125.000 Եւրոյի յատկացում Լիբանանի հայկական վարժարաններուն

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը 125.000 Եւրո յատկացուցած է Լիբանանի 16 հայկական վարժարաններուն: Այս քայլը կը յաջորդէ 2021-ի սկզբին դպրոցներուն կատարուած [650 գրասալիկներու \(tablets\) եւ 50 համակարգիչներու նուիրատուութեան](#):

Իր հիմնադրութենէն ի վեր, Կիւլպէնկեանի Հայկական Բաժանմունքը միշտ յատուկ ուշադրութիւն դարձուցած է Միջին Արեւելքի հայկական վարժարաններուն: Վերջին տարիներուն, Բաժանմունքը Լիբանանի համար համապարփակ [ռազմավարութիւն](#) մը մշակած է՝ իւրայատուկ տեղ տրամադրելով հայ համայնքէն ներս գործող [վարժարաններուն](#):

Այսօր Լիբանանը կը դիմագրաւէ իր պատմութեան ամենածանր տնտեսական ճգնաժամերէն մէկը: Ի պատասխան՝ Բաժանմունքը ժամանակաւորապէս սառեցուցած է 2020 թուականին մեկնարկած [դպրոցական նպաստներու իր ծրագիրը](#): Երեք դպրոցներու համապարփակ կրթական ծրագիրներու մշակումին աջակցելու փոխարէն, Բաժանմունքը այժմ կ'աջակցի բոլոր դպրոցներուն՝ անոնց անյետաձգելի կարիքները հոգալու նպատակով:

Տրամադրուող այս օժանդակութիւնը մասնիկ մըն է Լիբանանի մէջ Բաժանմունքին այլ նախաձեռնութիւններուն՝ կրթաթոշակներ, յատուկ կրթութեան ուղղուած ծրագիրներ, ուսուցիչներու վերաորակաւորում, հրատարակութիւններ եւ երիտասարդներու մշակութային ծրագիրներու աջակցութիւն:

Լրացուցիչ տեղեկութիւններու համար այցելեցէք Բաժանմունքին կայքէջը

<https://gulbenkian.pt/armenian-communities/>: